ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ց Ո Ւ Ց Ո Ւ Մ

«29» հունիսի 2020թ. Թիվ 08 - Ց

ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՄԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՈՒՄ COVID-19 ՊԱՑԻԵՆՏՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2020թ. մարտի 16-ի թիվ 298-Ն որոշման հավելվածի 22-րդ կետը և ՀՀ կառավարության 2020 թվականի մայիսի 21-ի թիվ 806-Ն որոշման 1-ին կետը՝

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններին (անկախ սեփականության և կազմակերպաիրավական ձևից)՝ 2-օրյա ժամկետում Առողջապահության նախարարություն ներկայացնել առնվազն 2 բժիշկ-մասնագետի թեկնածություն՝ սրտաբանություն, ներքին հիվանդություններ, թոքաբանություն, երիկամաբանություն, նյարդաբանություն, ներզատաբանություն, աղեստամոքսաբանություն, արյունաբանություն, ընտանեկան բժշկություն, շտապօգնություն և ինտենսիվ թերապիա,

ռևմատոլոգիա մասնագիտություններով՝ Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանում և ՀՀ ԱՆ ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտում՝ վերակենդանացման բաժանմունքում COVID-19 պացիենտների վարման վերաբերյալ կարճաժամկետ վերապատրաստման դասընթացին մասնակցելու համար:

2. Առողջապահության նախարարության անձնակազմի կառավարման վարչության պետին՝
   1) Ըստ ներկայացված ցանկի՝ կազմակերպել բժիշկ-մասնագետների՝ կարճաժամկետ վերապատրաստման դասընթացին մասնակցությունը՝ ՀՀ կառավարության 2020 թվականի մայիսի 21-ի թիվ 806-Ն որոշման 2-րդ կետին համապատասխան:
   2) Կարճաժամկետ վերապատրաստման դասընթացներ անցած բժիշկ-մասնագետներին ընդգրկել վերապատրաստված բժիշկ-մասնագետների ցանկում:
   3) Բժիշկ-մասնագետներին՝ ըստ անհրաժեշտության ներգրավել վերապրոֆիլավորված բժշկական կազմակերպություններում COVID-19 պացիենտների վարման գործընթացում:

ՆԱԽԱՐԱՐ՝ ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ